ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«17» 02 2023 թ. N 13-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N115-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-540-Ն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատու նշանակել Կոմիտեի նախագահի խորհրդական Արտավազդ Թարխանյանին:

2. Կոմիտեի հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուին փոխարինող նշանակել Կոմիտեի իրավաբանական վարչության պետ Խաչատուր Ղալթախչյանին:

3. Կոմիտեի հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատու ստորաբաժանում նշանակել Կոմիտեի իրավաբանական վարչությանը:

4. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2018 թվականի սեպտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատու ստորաբաժանում և հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումը համակարգող պաշտոնատար անձ նշանակելու մասին» N115-Ա հրամանը:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2/17/2023

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ